ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2823-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՏԵՂԱԴԻՐՔԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29. 04. 2021թ. N 698-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ կառուցապատման իրավունքով Քրիստինե Խալաֆյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Դեմիրճյան փողոց թիվ 10 / 3 խանութ /վկայական՝ N11062021-05-0039/ հասցեում գտնվող անշարժ գույքի տեղադիրքը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Դեմիրճյան փողոց թիվ 10 / 3 խանութ հասցեում գտնվող / անշարժ գույքի /վկայական՝ N 11062021-05-0039 տեղադիրքը:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

3110

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2824-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N550-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Արտաշ Հարությունյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևանհամայնք, ք. Սևան, Ֆրանսիական փողոց թիվ 10 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 10042025-05-0055/ զբաղեցրած 0.0195 հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Արտաշ Արարատի Հարությունյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Ֆրանսիական փողոց թիվ 10 հասցեում գտնվող հողամասի զբաղեցրած 0.0195 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.01868 հա մակերեսով /հասցե՝ Սևան համայնք, ք. Սևան, Ֆրանսիական փողոց թիվ 32 / 1 հողամաս, վկայական՝ 12102026-05-0006/՝ ուղղակի վաճառքի կարգով օտարելով Արտաշ Արարատի Հարությունյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ 1քմ՝ 2887. 5 դրամ վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

3111

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2825-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Սևան համայնքի ավագանու՝ 22.09.2026թ. N 133-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 9 -րդ կետի ա) ենթակետի և հիմք ընդունելով «ԲԵՍՏ ՖՈՒԵԼ» ՍՊԸ -ի տնօրենի հայտը՝ **որոշում եմ.**

1. «ԲԵՍՏ ՖՈՒԵԼ» ՍՊԸ-ին / գործունեությունը՝ ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 180 / 6 հասցե / տրամադրել տրամադրել 2026թ. համար՝ հեղուկ վառելիքի թույլտվություն՝ Սևանի համայնքի բյուջեի 900165101370 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 100000 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

3112

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2826-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, հիմք ընդունելով Ծաղկունքի գյուղապետարանի կողմից 2001 թվականի նոյեմբերի 22-ին կազմված «Հողամասը վիճակահանությամբ սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու արդյունքերի մասին թիվ 1» արձանագրությունը, Սևան համայնքի ավագանու՝ «Հողատարածքն անհատույց նվիրելու մասին» 2026 թվականի սեպտեմբերի 22-ի N 149-Ա որոշումը, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Ծաղկունք, 5-րդ փողոց, 5-րդ նրբանցք թիվ 15 հասցեում գտնվող, բնակավայրերի՝ նպատակային շանակություն, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակություն ունեցող 0.12հա մակերեսով հողատարածքը /վկայական՝ N 17082026-05-0109/ անհատույց սեփականության իրավունքով նվիրել Արշակ Լադիկի Մինասյանին:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

3113

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2827-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Մխիթար Վասիլի Հովսեփյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 25 / 14 հասցեում կառուցված 52. 50 քմ մակերեսով ավտոտնակը, 13.40քմ մակերեսով նկուղը և 52.50քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 25 / 14 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 29. 09. 2026թ. թիվ 2610-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 08. 10. 2026թ. պետական գրանցում ստացած 52. 50քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673 դրամ, 13.40քմ մակերեսով նկուղը՝ 1քմ՝ 3346 դրամ, զբաղեցրած 52. 50 քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887. 5դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Մխիթար Վասիլի Հովսեփյանին:
2. Քաղ. Մխիթար Վասիլի Հովսեփյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

3114

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2828-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Կարեն Գրիգորյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Աբովյան փողոց թիվ 3 շենքի հարևանությամբ՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 59,90 քմ մակերեսով նկուղը, 9,50 քմ մակերեսով աստիճանահարթակը, 60,25 քմ մակերեսով ավտոտնակը, 59,50 քմ մակերեսով տնտեսական շինությունը, 16,30 քմ մակերեսով բաց պատշգամբը և 15,50 քմ մակերեսով հարթակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատար ածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Կարեն Գրիգորյանի կողմից՝ Սևան համայնք, ք.Սևան, Աբովյան փողոց թիվ 3 շենքի հարևանությամբ՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում 1997թ. ինքնակամ կառուցված 59.90 քմ մակերեսով նկուղը /ներքին մակերեսը 48.50քմ/, 9.50 քմ մակերեսով աստիճանահարթակը, 60.25 քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 47.90քմ /, 59.50 քմ մակերեսով տնտեսական շինությունը /ներքին մակերեսը՝ 54.50քմ/, 16.30 քմ մակերեսով բաց պատշգամբը, 15.50 քմ մակերեսով հարթակը և զբաղեցրած 75.80 քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի:

2. Կարեն Գրիգորյանի կողմից ինքնակամ կառուցված 59.90 քմ մակերեսով նկուղը, 9.50 քմ մակերեսով աստիճանահարթակը, 60.25 քմ մակերեսով ավտոտնակը, 59.50 քմ մակերեսով տնտեսական շինությունը, 16.30 քմ մակերեսով բաց պատշգամբը և 15.50 քմ մակերեսով հարթակը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026DGZ84Y/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Խ. Աբովյան փողոց թիվ 3 / 1 ավտոտնակ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2829-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Սևան համայնքի ավագանու՝ 22.09.2026թ. N 133-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա) և բ) ենթակետերի, հիմք ընդունելով «ՍԵՎԱՆՆԱ » ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «ՍԵՎԱՆՆԱ» ՍՊԸ -ին / գործունեությունը՝ ք. Սևան, Սարգիս Սևանեցու փողոց թիվ 17 /45 հասցե / տրամադրել 2026թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներիի համար՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 20100 դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար;
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 20100 դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

3117

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2830-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Վարդան Խաչատրյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Զովաբեր, առանձնատուն հասցեում գտնվող հողամասի / վկայական՝ 2217014, տրված՝ 05. 03. 2007թ. / համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Զովաբեր, առանձնատուն հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Զովաբեր, 5-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 8 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2831-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք –1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա Զովաբեր բնակավայրի գլխավոր հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.01316հա մակերեսով հողամասը /գ. Զովաբեր/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա Զովաբեր բնակավայրի գլխավոր հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության, տրամադրել Սևան համայնք, գ. Զովաբեր, 1-ին փողոց թիվ 26 / 1 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 2-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

3119

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2832-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2589-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի սեպտեմբերի 28-ի «Սևան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով վաճառելու արդյունքների մասին» N 2589-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում՝ «Սևան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն» բառերի փոխարեն կարդալ «Սևան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը և հողամասի վրա առկա կիսաքանդ անասնաշենքն» բառերը;

2) որոշման 1-ին կետում՝ «գործառնական նշանակության հողամասի» բառերից հետո լրացնել «և հողամասի վրա առկա 135. 24քմ մակերեսով կիսաքանդ անասնաշենքի» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

3120

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2833-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Սևան համայնքի ավագանու՝ 13. 05. 2026թ. N 56-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն e-auctions.am կայքի էլեկտրոնային աճուրդի արձանագրության՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Ֆրանսիական փողոց թիվ 4 հասցեում գտնվող, 05-004-0030-0149 կադաստրային ծածկագրով, 0. 0518հա մակերեսով, բնակավայրի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողամասի /լոտ՝ 7891723/ աճուրդ-վաճառքի հաղթող ճանաչել Աշոտ Սուրիկի Քալոյանին և կնքել առուվաճառքի պայմանագիր:
2. Հողամասի սակարկության արդյունքում ձևավորված վաճառքի գինը՝ 8. 700. 000 ՀՀ դրամ, վճարել Սևան համայնքի բյուջեի՝ 900165101255 հաշվեհամարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

3121

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2834-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն և ՀՀ կառավարության՝ 18. 05 2006թ. թիվ 912-Ն որոշումների, հիմք ընդունելով քաղ. Հայկո Խանզադյանի լիազոր անձ Էդիկ Խանզադյանի դիմումը՝ Ծովագյուղի գյուղխորհրդի գործադիր կոմիտեի՝ 1991 թվականի հուլիսի 22-ի թիվ 8 նիստի որոշմամբ՝ գ. Ծովագյուղ հասցեում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար Հայկո Խանզադյանին հատկացված 1200 քմ մակերեսով հողատարածքը և հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինություններն ինքնակամ ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ծովագյուղի գյուղխորհրդի գործադիր կոմիտեի՝ 1991 թվականի հուլիսի 22-ի թիվ 8 նիստի որոշմամբ՝ Հայկո Արամի Խանզադյանին /ծնված՝ 24. 12. 1963թ./ հատկացված 1200 քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Հայկո Արամի Խանզադյանի սեփականության իրավունքը:
2. Սեփականության իրավունքով Հայկո Արամի Խանզադյանին պատկանող 1200 քմ մակերեսով հողատարածքում 1999թ. կառուցված 180. 00 քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 157.99/ ճանաչել ինքնակամ /հաշվառման տեղեկանք՝ 2026K3YHU5/՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 24-րդ փողոց, 1-ին նրբանցք թիվ 8 բնակելի տուն հասցե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

3122

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2835-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Գնունի Ստեփանյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Գնունի Ստեփանյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 27 / 59 հասցեում գտնվող հողամասում երկհարկանի գեղեցկության սրահի կառուցման համար:
2. Գնունի Ստեփանյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

3123

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2836-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետի, Սևան համայնքի ավագանու՝ 2026 թվականի սեպտեմբերի 22 - ի N 133-Ն որոշման 1-ին կետով սահմանված 1 հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետի, հիմք ընդունելով «ԲԻԹԻԷԼ Սերվիսիս» ՍՊԸ -ի տնօրենի հայտը՝ **որոշում եմ.**

1. «ԲԻԹԻԷԼ Սերվիսիս» ՍՊԸ-ին / գործունեությունը՝ ք. Սևան, Նաիրյան փ. շուկայի դիմաց / Կրթվելը նորածև է/ հասցե / տրամադրել 01. 10. 2026-31. 10. 2026թ. թ. ժամանակահատվածի համար՝ սոցիալական գովազդ տեղադրելու թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

3124

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2837-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.01284հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, այլ հողեր՝ գործառնական նշանակության, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ֆրանսիական փողոց թիվ 29 / 10 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

3125

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2838-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-049-0136-0016 կադաստրային ծածկագրով /գ. Ծովագյուղ/, 0.22646հա մակերեսով, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության հողամասի նկատմամբ կատարել պետական գրանցում:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N2-Ա որոշման 3-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

3126

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2839-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Անահիտ Գևորգյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 145 / 8 տաղավար և ք. Սևան, Նաիրյան փողոց 145 / 6 խանութ հասցեներում գտնվող /վկայականներ՝ N25072026-05-0051, N 16092026-05-0042/ անշարժ գույքերը միավորելու, միավորված անշարժ գույքի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 145 / 8 տաղավար և ք. Սևան, Նաիրյան փողոց 145 / 6 խանութ հասցեներում գտնվող գույքերը միավորել՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նաիրյան փողոց թիվ 145 / 6 խանութ հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2840-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 2262-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի սեպտեմբերի 2-ի «Բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին» 2262-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման 3-րդ կետում՝ «օտարել Ռուդիկ Շուրայի Հակոբյանին» բառերի փոխարեն կարդալ «օտարել Վահագ և Մանվել Հայրապետյաններին» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2841-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45 -րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Սևան համայնքի ավագանու՝ 22. 09. 2026թ. N 133-Ն որոշման 1-ին կետով սահմանված 1 հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետի, հիմք ընդունելով «Իմիջ Մ. Գ. » ՍՊԸ -ի տնօրենի հայտը՝ **որոշում եմ.**

1. «Իմիջ Մ. Գ. » ՍՊԸ-ին / գործունեությունը՝ ք. Սևան, Նաիրյան փ. /Վայլդբերիս - Այլ գովազդ/ հասցե / տրամադրել 01. 10. 2026-31. 10. 2026թ. թ. ժամանակահատվածի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի՝ 900165101503 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 54.000 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

3129

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2842-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՀԱՄԼԵՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով քաղաքացի Արմեն Հարությունյանի կողմից ինքնակամ տեղադրված շինութունների փաստը՝ պարզեցի. ՀՀ ՇՄՆ Էկոպարեկային ծառայության կողմից կազմված 040226311 արձանագրության համաձայն՝ քաղաքացի Արմեն Հարությունյանին կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքում առկա են ինքնակամ տեղադրված շինություններ՝ 11 հատ զրուցարան, 7 հատ վագոն տնակ, 1 հատ մետաղական սանհանգույց, 1 հատ մետաղական կոնտեյներ : Քաղաքացի Արմեն Հարությունյանը «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի հետ 2007 թվականի հունիսի 11-ին կնքել է N 784-198/002՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր: Ըստ պայմանագրի՝ հողատարածքի չափը կազմում է 4400 քմ: Սևանի համայնքապետարանը սահմանված կարգով ծանուղագրեր է ուղարկել քաղաքացի Արմեն Հարությունյանին: Նա հրավիրվել է համայնքապետարան օրենքով սահմանված կարգով լսումներին մասնակցելու, ինչպես նաև պարզաբանումներ տալու նպատակով: Սակայն քաղաքացին երբևէ չի ներկայացել Սևանի համայնքապետարան: Քաղաքացուն ուղարկվել է ծանուցագիր վարչական գործի քննությանը մասնակցելու համար, սակայն կրկին չի ներկայացել: Մանրազին ուսումնասիրություններ կատարելով՝ համայնքի ղեկավարի կողմից 28.09.2026թվականին վարույթը կասեցվել է: Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1 հոդվածի պահանջների՝ Արմեն Հարությունյանին ուղղված ծանուցումը տեղադրվել է «azdarar.am» կայքում: Օրենքով սահմանված ժամկետի լրանալուց հետո քաղաքացին համարվել է ծանուցված: Ծանուցմամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո քաղաքացի Արմեն Հարությունյանը չի ներկայացել վարչական գործի քննությանը: Վարույթի շրջանակներում հիմնավորվել է, որ Արմեն Հարությունյանը խախտել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջները՝ առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության թույլտվության, ինքնակամ կառուցել կամ տեղադրել է շինություններ: Օրենքով սահմանված կարգով հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները կառուցվել կամ տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին

պատկանող, պետական սեփականություն հանդիսացող, բնության հատուկ պահպանվող հողատարածքներ: ՀՀ Կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման 2-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: «Տեղական ինքնակառավարման մասին» 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներին համապատասխան՝ պետական սեփականություն հանդիսացող հողատարածքներում համայնքի ղեկավարը կանխարգելում և կասեցնում է ինքնակամ շինարարությունը, ընդունում է որոշում ինքնակամ շինությունների ապամոնտաժման (քանդման) վերաբերյալ և ապահովում է դրանց հետևանքների վերացումը: Քաղաքացու կողմից տեղադրված կամ կառուցված շինությունները գտնվում են Սևանա լճի ռեկրացիոն գոտում: Բոլոր շինությունները գտնվում են 1905.0 մետր բացարձակ նիշից ցածր տարածքներում: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել քաղաքացի Արմեն Հարությունյանին կառուցապատման իրավունքով տրված հողատարածքում առկա ինքնակամ տեղադրված շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2843-Ա

«ՆԵՔՍՏԳԵՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Կ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Սևանի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Վ. Սահակյանի՝ 07.10.2026թվականի N 56/8-1699 գրությունը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի և Սևանի համայնքապետարանի մասնագետների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները՝ սեփականության իրավունքով «Նեքստգեն» ՍՊԸ-ի տնօրեն Կ. Ղահրամանյանին պատկանող, Սևան համայնք, գյուղ Սեմյոնովկա, 1-ին փողոց թիվ 16 և 36 / 5 հասցեում գտնվող հողատարածքում հողատեսքի ինքնակամ փոխելու վերաբերյալ կազմված արձանագրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 54-րդ հոդվածի պահանջներով, **որոշում եմ.**

1. «Նեքստգեն» ՍՊԸ-ի տնօրեն Կ. Ղահրամանյանի նկատմամբ՝ Սևան համայնք, գյուղ Սեմյոնովկա, 1-ին փողոց թիվ 16 և 36 / 5 հասցեում գտնվող հողամասի հողատեսքը ինքնակամ փոխելու համար նշանակել վարչական տուգանք նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով:
2. «Նեքստգեն» ՍՊԸ-ի տնօրեն Կ. Ղահրամանյանին՝ 15-օրյա ժամկետում ինքնակամ հիմունքներով տուգանքը վճարել Սևան համայնքի բյուջեի 900165101123 հաշվեհամարին:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում հարցը լուծել օրենքով սահմանված դատական կարգով:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել 15 օրյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան երկու ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

3132

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2844-Ա

«ԳԱ-ԲԵՋ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՔՐԻՍՏԻՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով «Գա-Բեջ» ՍՊԸ-ի տնօրեն Քրիստինա Գասպարյանին կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքում առկա ինքնակամ շինությունների փաստը՝ պարզեցի. համաձայն ՀՀ ՇՄՆ Էկոպարեկային ծառայության կողմից իրավախախտում կատարելու վերաբերյալ կատարված N 040226339 արձանագրության՝ «Գա-Բեջ» ՍՊԸ-ի տնօրեն Քրիստինա Գասպարյան՝ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ 2008 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված հողամասի կառուցապատման իրավունքի N 1357-1231 պայմանագրով ՍՊԸ-ին տրամադրված հողատարածքում առկա են ինքնակամ շինություններ՝ քարից կառուցված ցանկապատ և մեկ հատ քարե հիմքով փայտե տնակ: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում «Գա-Բեջ» ՍՊԸ-ի տնօրեն Քրիստինա Գասպարյանը սահմանված կարգով ծանուցվել է, սակայն չի ներկայացել Սևանի համայնքապետարան լսումներին մասնակցելու և պարզաբանումներ տալու նպատակով: Վարույթի շրջանակներում նյութերը մանրամասն ուսումնասիրելու նպատակով 2026 թվականի հունիսի 26-ին Սևան համայնքի ղեկավարը համապատասխան որոշմամբ վարույթը կասեցրել է: Համաձայն ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1 հոդվածի պահանջների «Գա-Բեջ» ՍՊԸ-ի տնօրենին ուղղված ծանուցումը տեղադրվել է «azdarar.am» կայքում: Օրենքով սահմանված ժամկետի լրանալուց հետո ՍՊԸ-ի տնօրենը համարվել է ծանուցված: Ծանուցմամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո ՍՊԸ-ի տնօրենը չի ներկայացել վարչական գործի քննությանը: Վարույթի շրջանակներում հիմնավորվել է, որ «Գա-Բեջ» ՍՊԸ-ի տնօրենը խախտել է ՀՀ Կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջները՝ առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության թույլտվության, ինքնակամ կառուցել կամ տեղադրել է շինություններ: Օրենքով սահմանված կարգով հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները կառուցվել կամ տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով հողատարծքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող, պետական սեփականություն հանդիսացող, բնության հատուկ պահպանվող հողատարածքներ: ՀՀ Կառավարության

2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 2-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներին համապատասխան՝ պետական սեփականություն հանդիսացող հողատարածքներում համայնքի ղեկավարը կանխարգելում և կասեցնում է ինքնակամ շինարարությունը, ընդունում է որոշում ինքնակամ շինության ապամոնտաժման (քանդման) վերաբերյալ և ապահովում է դրանց հետևանքների վերացումը: «Գա-Բեջ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից տեղադրված կամ կառուցված շինությունները գտնվում են Սևանա լճի ռեկրեացիոն գոտում: Միաժամանակ հողատարածքում քարից պարսպի կառուցումը և վագոն տնակի տեղադրումն իրականացվել են մինչև 2021թ. դեկտեմբերի 16-ին ընդունված ՀՕ-401-Ն օրենքի փոփոխությունները: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ, ՀՀ «ՏԻՄ» օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, ՀՀ կառավարության 2001 թ. սեպտեմբերի 24-ի N 896 որոշման, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ կառավարության 18.12.2008թվականի 1563-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել՝ «Գա-Բեջ» ՍՊԸ-ին կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքում առկա ինքնակամ շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 14
ք.Սևան

3134

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2845-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Ժաննա Վարդանյանի դիմումը՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով Վոլոդյա Սերյոժայի Հարությունյանին և Ժաննա Վանիկի Վարդանյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Գ. Լուսավորչի փողոց թիվ 30 տնտեսական շինություն հասցեում գտնվող անշարժ գույքը /վկայական՝ N 16032026-05-0039/ և ըստ 08.10.2026 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի՝ Վոլոդյա Սերյոժայի Հարությունյանին և Ժաննա Վանիկի Վարդանյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Գ. Լուսավորչի փողոց 26 հասցեում գտնվող անշարժ գույքը միավորելու և միավորված անշարժ գույքի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Գ. Լուսավորչի փողոց թիվ 30 տնտեսական շինություն և Սևան համայնք, ք. Սևան, Գ. Լուսավորչի փողոց 26 հասցեներում գտնվող գույքերը միավորել՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Գ. Լուսավորչի փողոց թիվ 26 տնտեսական շինություն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 15
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2846-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Սերգեյ Առաքելյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Սերգեյ Առաքելյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Ե. Չարենցի փողոց թիվ 96 հասցեում գտնվող հողամասում տնտեսական շինության, պարսպի կառուցման և գոյություն ունեցող շինության քանդման համար:
2. Սերգեյ Առաքելյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 15
ք.Սևան

3136

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2847-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N 2098-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի օգոստոսի 14-ի «Ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինական ճանաչելու մասին» N2098-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «օրինականացվող 1քմ շինության» բառերից հետո կարդալ «և յուրաքանչյուր փոփոխված պատուհանի /1 հատ՝ պատուհան/» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 15
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2848-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2601-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի սեպտեմբերի 28-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի տնօրինման մասին» 2601-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և 2-րդ կետերում՝ «օտարել Համլետ Ֆրունզի Ներսիսյանին» բառերի փոխարեն կարդալ «օտարել Համլետ Ֆռունզի Ներսիսյանին» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 15
ք.Սևան

3138

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2849-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Բավական Ռազմիկի Ալեքսանյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 47 / 24 հասցեում կառուցված 30. 50քմ մակերեսով ավտոտնակը, 30. 50քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան թիվ 47 / 24 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 23. 09. 2026թ. թիվ 2506-Ա որոշման համաձայն՝ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 07. 10. 2026 թ. պետական գրանցում ստացած 30. 50քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673 դրամ, զբաղեցրած 30. 50քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887. 5դրամ ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Բավական Ռազմիկի Ալեքսանյանին :
2. Քաղ. Բավական Ռազմիկի Ալեքսանյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 15
ք.Սևան

3139

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2850-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 1078-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

